

**Մ Ե Դ Ի Ա Մ Ա Ք Ս**  
լրատվական գործակալություն  
Հեռ. 54 54 31, ֆաքս 54 54 37  
www.mediamax.am

**Հղումը պարտադիր է**

**11.05.09**

**Առաջին թողարկում**

**Հղումը պարտադիր է**

**Ադրբեջանի ԱԳՆ ղեկավարն ասել է, որ Պրահայի հանդիպմանը հայկական կողմը կառուցողականություն չի ցուցաբերել՝**

Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը կարծում է, որ մայիսի 7-ին Պրահայում կայացած հանդիպմանը հայկական կողմը կառուցողականություն չի ցուցաբերել:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄՍՔՍ-ը, վկայակոչելով Ինտերֆաքս-Ադրբեջան-ը, Էլմար Մամեդյարովը մայիսի 9-ին ասել է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահները Պրահայի հանդիպմանը զգալի առաջընացի չեն հասել:

Պրահայում քննարկվել են բարդ հարցեր: Սակայն, ցավոք, հայկական կողմը կառուցողականություն չի դրսևորել,- ասել է Էլմար Մամեդյարովը:

Հայկական կողմն, ընդհակառակը, կարծում է, որ Պրահայում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումն օգտակար էր եւ թույլ է տվել անավելագույնս հստակեցնել կողմերի մոտեցումները ԼՂՀ կարգավորման հիմնական սկզբունքների շուրջ, ինչպես նաեւ մոտեցնել դիֆերոշումները որոշ կետերի ուղղությամբ:

ՄԵԴԻԱՄՍՔՍ

**Հղումը պարտադիր է**

**Միջնորդները Սանկտ Պետերբուրգում՝ բեկման՝ հույս ունեն**

ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի եւ ամերիկացի համանախագահներ Յուրի Մերզլյակովը եւ Մեթյու Բրայդան չեն բացառում, որ հունիսի սկզբին Սանկտ Պետերբուրգում կայանալիք հանդիպմանը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կարող են բեկման հասնել:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄՍՔՍ-ը, միջնորդներն այդ մասին ասել են ՝**Эхо Москвы՝** ռադիոկայանի հետ հարցազրույցում:

Հուսով եմ, որ մեկ ամիս անց, երբ նրանք կհանդիպեն Սանկտ Պետերբուրգում, այդպիսի բեկումնային պահը լիովին հնարավոր կդառնա,- ասել է Մեթյու Բրայզան: Նա հսկայական քայլ առաջ է անվանել Ադրբեջանի նախագահի վերջերս արած հայտարարությունն այն մասին, որ պետք է Ղարաբաղը Հայաստանին միացնող միջանցք լինի:

Ինչ վերաբերում է առաջընթացին, ապա մենք առաջխաղացման հույս ունենք այն հարցերի շուրջ, որոնք դեռևս մնում են չհամաձայնեցված: Դրանք կարգավորման մոտավորապես 4 հիմնարար սկզբունքներն են: Նրանց մեծամասնության շուրջ արդեն առկա է փոխըմբռնում, եւ շատ կցանկանայինք հուսալ, որ Սանկտ Պետերբուրգում կհամաձայնեցվի մնացած հարցերի մեծ մասը,- ասել է ռուսաստանցի միջնորդ Յուրի Մերզլյակովը:  
ՄԵԴԻԱՄԱՐԿ

### **Հղումը պարտադիր է**

**Միջնորդները նորից հայտարարել են, որ ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացները կապակցված չեն**

ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի միջնորդ Յուրի Մերզլյակովը կարծում է, որ ղարաբաղյան կարգավորման գործընթացը չպետք է դառնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման պատանդը:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄԱՐԿՍ-ը, միջնորդն այդ մասին ասել է 'Эхо Москвы' ռադիոկայանի հետ հարցազրույցում:

Մկսելով գործընթացը՝ հայկական եւ թուրքական կողմերը պայմանավորվել են, որ այն ընթանալու է առանց նախապայմանների: Որպես այդպիսին Թուրքիան նախկինում առաջադրում էր Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցում զգալի առաջընթացը: Այժմ, եթե հավատանք մեկնաբանություններին, որոնք արվել էին Հայաստանի, Թուրքիայի եւ Շվեյցարիայի ԱԳՆ-ների համատեղ հայտարարության հրապարակման կապակցությամբ, պետք է ենթադրել, որ այդպիսի նախապայմաններ չկան: Այդ պատճառով մենք կարծում ենք, որ, իհարկե, գործընթացները ազդեցություն են գործում իրար վրա: Բայց այդ ազդեցությունը պետք է դրական լինի, եւ նրանք զարգանում են զուգահեռաբար՝ չհատվելով,- ասել է Յուրի Մերզլյակովը:

Նրա ամերիկացի գործընկեր Մեթյու Բրայզան հաստատել է, որ այդ գործընթացները առանձին եւ եւ զուգահեռ:

Նրանք ընթանում են տարբեր արագություններով: Եվ մենք կարծում ենք, որ մի առաջընթացն օգնում է մյուսին, եւ հակառակը: Բայց դա չի նշանակում, որ նրանք կապակցված են. նրանք առանձին են,- նկատել է նա:

ՄԵԴԻԱՄԱՐԿ

## Երկրորդ թողարկում

### Հղումը պարտադիր է

**Նախորդ շաբաթ՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա՝-ում կորպորատիվ պարտատոմսերի հետ կատարված գործարքների ծավալը կազմել է ընդամենը 3 մլն դրամ**

Անցյալ շաբաթ՝ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա՝-ում կորպորատիվ պարտատոմսերի հետ կատարված գործարքների ծավալը դրան նախորդող շաբաթվա համեմատ կրճատվել է ավելի քան 14 անգամ՝ կազմելով 3 մլն դրամ: Գործարքների քանակը 3-ից դարձել է 9:

Նախորդ շաբաթ գործարքներ են կնքվել՝ Կոնվերս Բանկի,՝ Արդշինինվեստբանկի,՝ Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի,՝ Էլիտ Գրուպ ՓԲԸ երկրորդ տրանշի, ինչպես նաև՝ Վալլետտա՝ ՄՊԸ երկրորդ տրանշի պարտատոմսերով:

Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի՝ եւ Արդշինինվեստբանկի պարտատոմսերի գործարքներում անցյալ շաբաթվա արդյունքներով արձանագրվել է եկամտաբերության նվազում, համախապատասխանաբար, 0,0292 եւ 0,0375 տոկոսային կետերով: Վալլետտայի,՝ Կոնվերս Բանկի՝ եւ Էլիտ Գրուպի՝ պարտատոմսերի մասով արձանագրվել է եկամտաբերության աճ, համապատասխանաբար, 1,0887, 0,0003 եւ 0,139 տոկոսային կետերով:

Եկամտաբերության միակ զգալի փոփոխությունը տեղի է ունեցել Վալլետտա՝ (VALTB2) ՄՊԸ երկրորդ տրանշի պարտատոմսերի հետ, ինչը նախեւառաջ պայմանավորված է Կենտրոնական բանկի կողմից ընկերության վարկանիշը՝ Գ +՝-ից՝ Գ -՝ իջեցնելու հանգամանքով,- ՄԵԴԻԱՄԱՔՍ-ին ասել է Կապիտալ Ասսեթ Մենեջմենթ՝ ներդրումային ընկերության ղիլեր-բրոքեր Ալիկ Առաքելյանը:

Նրա խոսքերով, գործարքների թվի ավելացումը, որն ուղեկցվում է ծավալների կրճատմամբ, բացատրվում է փոքր ներդրողների ակտիվացմամբ:

Նախորդ շաբաթ գրանցվել է նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության ոչ մեծ աճ: Ալիկ Առաքելյանը կարծում է, որ ինչպես տեղաբաշխված, այնպես էլ Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պետական պարտատոմսերի եկամտաբերության ավելացումը միանշանակ պետք է նպաստի արժեկտրոնային արժեթղթերի եկամտաբերության աճին:

Խնդիրն այն է, որ հայաստանյան ֆոնդային շուկան չի տարբերվում զգայունությամբ, եւ այն գործոնը, որը պետք է ազդի շուկայի վրա, ազդում է ուշացումով,- նշել է Կապիտալ Ասսեթ Մենեջմենթի ղիլեր-բրոքերը:

ՄԵԴԻԱՄԱՔՍ

11.05.09

Երրորդ թողարկում

## **Հղումը պարտադիր է**

### **ԱՄՀ-ն հռետեսական կանխատեսումներ է տալիս ՀՀ տնտեսության վերաբերյալ**

Արժույթի միջազգային հիմնադրամը /ԱՄՀ/ կարծում է, որ Հայաստանի տնտեսական հեռանկարները 2009-2010թթ.-ին ամենահռետեսականն են Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրների շարքում:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄԱՔՍ գործակալությունը, ԱՄՀ-ի այսօր Երեւանում ներկայացրած հետազոտության համաձայն, 2009 թվականին Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրներից տնտեսական ետընթաց կնկատվի միայն Հայաստանում (-5%) եւ Ղազախստանում (-2%):

2010 թվականին ՀՆԱ աճ է սպասվում տարածաշրջանի բոլոր երկրներում, բացի Հայաստանից, որտեղ տնտեսական աճը, ԱՄՀ-ի կանխատեսումների համաձայն, զրոյական կլինի:

Այս տարի Ադրբեջանում եւ Վրաստանում ԱՄՀ-ը կանխատեսում է ՀՆԱ աճ, համապատասխանաբար, 2.5% եւ 1%-ով, իսկ 2010 թվականին, համապատասխանաբար, 12.3% եւ 3%-ով:

ԱՄՀ-ի առաքելության Հայաստանի գծով ղեկավար Մարկ Լյուիսը ՀՀ-ի վերաբերյալ նման կանխատեսումը բացատրել է շինարարական հատվածում կտրուկ անկմամբ, որը նախկինում տնտեսության աճի հիմնական գործոնն էր, ինչպես նաեւ Հայաստանի կողմից արտահանվող հումքի միջազգային գների նվազմամբ:

ԱՄՀ Մերձավոր Արեւելքի եւ Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի փոխտնօրեն Ռաթնա Սահայը դրական է գնահատել ՀՀ կառավարության հակաճգնաժամային գործողությունները` նշելով, որ այն պետք է շարունակի պահպանել ազգային արժույթի ճկունությունը, դիմակայել ֆինանսական ոլորտի ռիսկերին եւ օգտագործել հարկային խթանների հնարավորությունները:

Մարկ Լյուիսն իր հերթին նշել է լողացող փոխարժեքի հաջողված ռեժիմը եւ Հայաստանի միջազգային պահուստների կայունացումը:

ՄԵԴԻԱՄԱՔՍ

11.05.09

**Չորրորդ թողարկում**

## **Հղումը պարտադիր է**

**Ղարաբաղյան կողմ անցնելիս ձերբակալվել է ադրբեջանցի զինվոր**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության /ԼՂՀ/ Պաշտպանության բանակի զինծառայողների կողմից այսօր ձերբակալվել է Ադրբեջանի քաղաքացի:

Ինչպես այսօր ՄԵԴԻԱՄՍՔՍ-ին հայտնել են ԼՂՀ Ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով պետական հանձնաժողովում, կիրակի առավոտյան Ֆիզուլիի շրջանի Աշաղի Աբդուրախմանլի բնակավայրի կողմից ղարաբաղյան կողմ անցնելիս ձերբակալվել է ադրբեջանցի մի զինվոր, ով ներկայացել է որպես սերժանտ Հաջիեւ Անար Հանրաբա-օղլի՝ ծնված 1990 թվականին ՀՀ Վարդենիսի շրջանի Վարդենիս գյուղում:

Ձերբակալվածը կրել է Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողի հագուստ՝ առանց տարբերանշանի: Զենք եւ անձը հաստատող փաստաթուղթ չի ունեցել:

ԼՂՀ Ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով պետական հանձնաժողովը կատարվածի մասին տեղեկացրել է Ստեփանակերտում հավատարմագրված՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի /ԿԽՄԿ/ եւ ԵԱՀԿ գրասենյակներին:  
ՄԵԴԻԱՄՍՔՍ

**11.05.09**

**Հինգերորդ թողարկում**

**Հղումը պարտադիր է**

**VivaCell-MTS-ը ավագ դասարանցիների համար բջջային կապի օգտագործման դաս է անցկացրել**

VivaCell-MTS բջջային օպերատորը այսօր երեւանյան դպրոցների աշակերտների համար բջջային կապի օգտագործման դաս է անցկացրել:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄՍՔՍ-ը, VivaCell-MTS-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն անց է կացրել տեղեկատվական-ձանաչողական արշավ 8-րդ եւ 9-րդ դասարանների 46 աշակերտների համար: Արշավի ընթացքում Ռալֆ Յիրիկյանը դպրոցականներին ներկայացրել է ընկերության վերջին նվաճումները, մասնավորապես, երրորդ սերնդի 3G ցանցը եւ տեսազանգերը:

Աշակերտները հնարավորություն են ստացել այցելել call-կենտրոն, հաճախորդների սպասարկման կենտրոն, կենտրոնական կոմուտացիայի համակարգ եւ այլն: Ռալֆ Յիրիկյանը աշակերտներին ներկայացրել է հասարակական վայրերում, ավտոմեքենայում, աշխատավայրում, կրթական եւ մշակութային հաստատություններում բջջային հեռախոսակապի շահագործման էթիկական կողմերը:

ՎivaCell-MTS-ն ուրախությամբ մասնակցում է 14-16 տարեկան երիտասարդ մասնագետների զարգացման գործին: Ապագայում, երբ հեռահաղորդակցային

ուրրտն ավելի զարգացած դառնա, կզգացվի երիտասարդ, առաջադեմ կադրերի պահանջ, որոնք առաջնորդներ կդառնան ձեռնարկատիրության ոլորտում,- ասել է Ռալֆ Յիրիկյանը:  
ՄԵԴԻԱՄՍՔՍ

11.05.09

**Վեցերորդ թողարկում**

**Հղումը պարտադիր է**

**Ինեկոբանկի պարտատոմսերը ցուցակվել են ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում**

Ինեկոբանկ ՓԲԸ-ի անվանական զեղչատոկոսային պարտատոմսերը ցուցակվել են ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում՝ ընդգրկվելով Bbond ցուցակում:

Ինչպես ՄԵԴԻԱՄՍՔՍ-ին հայտնել են ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի մամլո ծառայությունում, ցուցակվել են 50 000 դրամ անվանական արժեքով, 365 օր մարման ժամկետով եւ տարեկան 9.5% եկամտաբերությամբ 7000 պարտատոմսեր: Թողարկմանը շնորհվել է ENECB1 բորսայական հապավումը:

Բանկի միջազգային բաժնետերերն են Միջազգային Ֆինանսական Կորպորացիան (10%) եւ KfW Բանկային խմբի անդամ հանդիսացող գերմանական DEG (Deutsche Investitions-Und Entwicklungsgesellschaft) ներդրումային ընկերությունը (13.5%):

2009թ. մարտի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 9 367 105 հազ. դրամ, ակտիվները՝ 48 442 912 հազ. դրամ, պարտավորությունները՝ 39 085 807 հազ. դրամ:

Ֆոնդային բորսայի մամլո ծառայությունում հիշեցրել են, որ 2009թ. փետրվարից Ինեկոբանկը ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայի անդամ է, հնարավորություն ունի գործարքներ իրականացնել բորսայի բոլոր, այդ թվում՝ կորպորատիվ եւ պետական պարտատոմսերի, ՌԵՊՈ գործիքների եւ արտարժույթի հարթակներում:

ՄԵԴԻԱՄՍՔՍ

11.05.09

**Յոթերորդ թողարկում**

**Հղումը պարտադիր է**

**ՀՀ IT հասվածի ընկերությունները դիտարկում են IPO-ի հնարավորությունը**

NASDAQ OMX-ը ամենահարմար բորսային հարթակն է SS ընկերությունների համար, եւ հայաստանյան պայմաններում նրանց IPO դուրս գալը լիովին իրականանալի է:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄԱՍՔՍ գործակալությունը, այդ մասին հայտարարել է 'Գրանթ Թորնթոն Ամիօ'-ի բաժնետեր Գուրգեն Հակոբյանը՝ Աղվերանում հանդես գալով ՀՀ IT ընկերությունների ղեկավարների ֆորումին:

'ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա' ֆոնդային բորսայի գլխավոր տնօրեն Արմեն Մելիքյանը իր հերթին նշել է, որ այն պայմաններում, երբ Հայաստանը հայտնվել է համաշխարհային ճգնաժամի եւ աճող գնաճի բացասական ազդեցության ներքո, ներդրումների համար առավել հրապուրիչ են այն ընկերությունների արժեթղթերը, որոնք ճգնաժամից անկախ աճ են ցուցադրում: Այդպիսին են էներգետիկայի, կոմունալ ծառայությունների, սննդի եւ IT ոլորտները,- ասել է Արմեն Մելիքյանը:

Նա տեղեկացրել է ծրագրվող 70 օրենսդրական փոփոխությունների մասին, որոնցով հարկային արտոնություններ կտրամադրեն այն ընկերություններին, որոնց բաժնետոմսերը կցուցակվեն բորսայում՝ նշելով, որ հավանական թողարկողներին բորսան պատրաստ է ցուցաբերել անվճար խորհրդատվական օժանդակություն:

ՀՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (UITE) նախագահ եւ Sourcio ընկերության գլխավոր տնօրեն Հովհաննես Ավոյանը ՄԵԴԻԱՄԱՍՔՍ-ի հետ հարցազրույցում ասել է, որ IPO դուրս գալը երկար գործընթաց է, եւ այն SS ընկերությունները, որոնք ցանկանում են մի քանի տարի հետո հանդես գալ առաջնային հրապարակային առաջարկությամբ, պետք է այդ գործընթացը սկսեն այսօրվանից:

'Sourcio-ն, մասնավորապես, դիտարկում է IPO դուրս գալու հնարավորությունը 3-4 տարվա հեռանկարում,- ասել է Հովհաննես Ավոյանը:

UITE-ի ներկայացուցչի խոսքերով, ներկայումս SS հատվածի ներկայացուցիչները Հայաստանում վենչուրային հիմնադրամի ստեղծման կարիք ունեն, որն արդեն սկսում է ձեւավորվել Փոքր եւ միջին ձեռնարկատիրության ազգային կենտրոնի շրջանակներում:

ՄԵԴԻԱՄԱՍՔՍ

**Հղումը պարտադիր է**

11.05.09

**Ութերորդ թողարկում**

**Հղումը պարտադիր է**

**Պետությունը պետք է մասնակցի Հայաստանում ինտերնետային կապ ապահովելու գործընթացին, կարծում է ADC-ի կոմերցիոն տնօրենը**

Պետությունը պետք է մասնակցի Հայաստանում ինտերնետ կապ ապահովելու գործընթացին, հայտարարել է Armenian Datacom Company (ADC) պրովայդերի կոմերցիոն տնօրեն Ավետիք Քալանթարյանը:

Ինչպես հաղորդում է ՄԵԴԻԱՄՄՔՍ գործակալությունը, մայիսի 9-ին Աղվերանում հանդես գալով SS ընկերությունների ղեկավարների ֆորումի շրջանակներում Հայաստանում ինտերնետի խնդիրների քննարկմանը՝ Ավետիք Քալանթարյանն ասել է, որ Հայաստանում ինտերնետ կապ ապահովելու հետ կապված հիմնական խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է այդ ոլորտից պետության հեռանալով:

Եթե Հայաստանում կառավարության մասնակցությամբ ստեղծվի խոշոր կազմակերպություն, որն իրավասու լինի միջազգային մակարդակով բանակցություններ վարել, ապա Հայաստանում ինտերնետային կապի թե գինը, թե որակը զգալիորեն կբարելավվեն,- ասել է Ավետիք Քալանթարյանը:

Նա կարծիք է հայտնել, որ Հայաստանին ինտերնետ մատակարարող 'ԱրմենՏելը' եւ Fibernet-ն իրավասու չեն բանակցություններ վարել միջազգային մակարդակով, ինչը եւ բացասաբար է ազդում Հայաստանում ինտերնետի ինչպես որակի ու գնի, այնպես էլ պրովայդերների միջեւ հարաբերությունների կարգավորման վրա:

Այդ համատեքստում Ավետիք Քալանթարյանը նշել է ՀՀ ինտերնետային պրովայդերների միջեւ փոխկապակցման ապահովման հետ կապված խնդիրները, որոնք հաճախ իրար միջեւ արհեստական սահմանափակումներ են դնում, ինչը հանգեցնում է տեղեկատվության փոխանցման ուշացումների եւ վերաուղարկվող փաթեթների կորուստների:

Այդ հարցով պետք է զբաղվեր 'ԱրմենՏելը', որը, սակայն, շատ բարձր գներ է սահմանել ինտերնետային պրովայդերների միջեւ փոխկապակցման ապահովման համար, եւ այդ պատճառով վերջիններս սկսել են ենթակառույց ստեղծել սեփական ուժերով,- ասել է ADC-ի կոմերցիոն տնօրենը:

ՄԵԴԻԱՄՄՔՍ

## **Հղումը պարտադիր է**

**'Տարածքները' կվերադարձվեն Ադրբեջանին, իսկ Լեռնային Ղարաբաղը նոր իրավիճակ կստանա, հայտարարել է Մեթյու Բրայզան**

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Մեթյու Բրայզան այսօր ՄԵԴԻԱՄՄՔՍ գործակալությանը տված հարցազրույցում հերքել է իրեն վերագրված հայտարարություններն այն մասին, որ 'Ղարաբաղը եւ այլ տարածքները' կվերադարձվեն Ադրբեջանին:

Էլխո Մոսկվիին՝ տված իմ հարցազրույցի ձայնագրությունը, որը տեղադրված է այդ ռադիոկայանի կայքում, հաստատում է. ես չեմ ասել այն մասին, որ 'Ղարաբաղը եւ այլ

տարածքները՝ վերադարձվելու են Ադրբեջանին: Ես ասել եմ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկների համաձայն, տարածքները վերադարձվելու են Ադրբեջանին, սակայն Լեռնային Ղարաբաղը ստանալու է նոր իրավիճակ, կամ մի իրադրություն, որի էությունը բանակցությունների առարկա է, - ՄԵԴԻԱՄԱՔՍ-ին տված հարցազրույցում հայտարարել է ամերիկացի դիվանագետը:

Ես այսօր խոսել եմ Էխո Մոսկվիի՝ գլխավոր խմբագրի հետ սխալ սղագրության մասին, եւ նա անմիջապէս հիշեց, որ հարցազրույցում ես չեմ ասել ինձ վերագրված բառերը, սակայն ասել եմ այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը նոր իրադրություն կստանա: Էխո Մոսկվիի՝ գլխավոր խմբագիրը քիչ առաջ հայտնեց ինձ, որ ռադիոկայանի կայքում տեղադրված է ուղղված սղագրությունը, որը համապատասխանում է իմ ասածին: Այսպիսով, ես կոչ եմ անում բոլոր շահագրգիռ կողմերին կրկին այցելել Էխո Մոսկվիի կայքը: Այս միջադեպը եւս մեկ անգամ շեշտում է այն կարեւորությունը, որ լրագրողները հապշտապ եզրակացություններ չանեն: Եթե լրագրողը համարում է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահն արմատական հայտարարություն է արել, որը տարբերվում է մինչ այդ ժամանակն ասածներից, դա նշանակում է, որ համանախագահը գրեթե հաստատ նման հայտարարություն չի արել, - նշել է Մեթյու Բրայզան:

ՄԵԴԻԱՄԱՔՍ